Հուսիկ Արա

Մելոդիա

1 . Մաժոր

Կարճ կեսօր: Թույլ արև:
Տերևաթափի ամիս:
Փողոցների երկարության մեջ,
այգիների փափուկ սիզամարգին,
սրճարաններում թեք նստած՝
մենք տաքանում ենք
մարտադաշտից եկող կրակոտ լուրերով.
Պաշտպանության բանակը խոցել է
5 անօդաչու թռչող սարք,
9 տանկ ու զրահամեքենա,
1 SOU համակարգ,
2 ուղղաթիռ,
թշնամին ունի մարդկային ուժի ահռելի կորուստ,
այդ թվում սպանվել է 31 վարձկան ահաբեկիչ:

Իսկ երեկոյան սառում ենք հեռուստացույցի առաջ՝
տանը՝ բազմոցին թիկնած,
և չեն ծածկվում մեր մրսող ու բաց տեղերը:
Բոլոր անցքերը ամուր փակած սահմանից
պատերազմը քաղաք է սողում ու գյուղեր
օրվա բոլոր ժամերին՝

սև ժապավեններին գրված նոր անուններով.
Նվեր 18
Հայկ 19
Կարեն 20
Դավիթ 31
Տարոն 56
ժամկետային, կամավոր ու աշխարհազոր:
Իսկ կանանց ջոկատից զոհվել է Անին՝
երկու երեխայի մայր:
Կնոջ գեղեցկություն ունի պատերազմը այս անգամ
և երեխայի արցունքի մաքրություն.
չքնաղ կինչեր այս պատումը որպես վիպերգ,
եթե ողջերը չթաղեին մահացածներ
և մահացածները չայցելեին ողջերին թաղվելուց հետո:

Պատերազմը անուններ է գրել մեր աչքերի մեջ՝
և փամփուշտով փորել մեր սրտի վրա,
որ անկարող է ջնջել որևէ խաղաղություն:
Մեր երակներում հավաքած վերջին ջերմությամբ
փափուկ ծածկում ենք լույսի պես մարմինները նրանց
և ամփոփում Եռաբլուր պանթեոնում՝
իրենց հայրերի ու երդբայրների կողքին՝
նախորդ պատերազմներում զոհված,
և օր օրի աճող գերեզմաններում:
Հայրերը զոհվեցին որդիների համար,
հիմա որդիները զոհվում են հայրերի փոխարեն՝
երկրորդ անգամ:

Սահմանին հոսպիտալ է,
ներսում՝ վարակին հարմարեցված հիվանդանոց.
վիրադանակ, հաբերի ու ներարկիչների խուլ աղաղակ:
Մենք դադարել ենք լսել
առողջապահության համաշխարհային հորդորները.

դիմակ կրել,
պահպանել սոցիալական հեռավորություն,
ձեռքերն ախտահանել ալկոգելով:
Ոչ մի կերպ չի գտնվում COVID-19–ի պատվաստանյութը
կամ բուժման որևէ միջոց.
համաճարակը սպանում է նույնքան և առանց ընտրելու՝
ինչպես սմերչը մարտադաշտում՝
հավասար մահվան նշան դնելով թիկունքի և ճակատի միջև:
Մենք մնացել ենք երկու պատերազմի արանքում,
մեկը մեր դեմքն է փակել,
մյուսը մեր թիկունքն է բացում:
Մենք քնում ենք համաճարակի վրիպած կյանքը
մեր թոքերում սեղմած
և արթնանում պատերազմի դիպուկ մահը
մեր սրտի մեջ:

Ժամանակը սև քառակուսի է պատերազմի օրացույցում:
Բերքահավաքի ամսին
մենք հաշվում էինք,
թե ովքեր են զոհվել մեզանից,
տերևաթափի ամսին
փնտրում ենք՝ ովքեր մնացին.
իսկ արհավիրքն այս՝ սև ու ավեր, սկսվեց,
երբ թուզը վերջանում, նուռը ճաքում էր:
Մեր ջերմությունն են մեզնից արձակված,
մեր էությունն են վերադարձած մեզ,
մեր լույսն են՝ մեզ իրենց մեջ առած.
նրանց հայացքից մահն էր սարսռում
և գտավ մի պահ վախը փարատելու:
Ճաք են մեր սրտի վրա,
խորշ են մեր արյան մեջ,
խոռոչ՝ մեր հոգիներում.
այլևս մեր շնչառությունն են մեզնից սկսվող:

Լույսի վերմակ է հողի հաստ շերտը,
որ ծածկում ենք մարմինները նրանց,
և բացվելու են տաք արշալույսին՝
արև առավոտի մեջ:
Նրանք գալու են ամեն գարնան հետ
արագիլների ճախրանքի մեջ,
թափվող անձրևի կաթիլներում,
քամու բարակ հպումի պես,
և անցնելու են կյանքի դաշտերով մեզ հետ.
չէ՞ որ աղջիկը խնդրել է.
մազերս չեմ կտրի,
կարճ չեմ հագնի,
կանեմ՝ ինչ դու ես ուզում,
չեմ նկատի տառասխալները գրած նամակիդ,
միայն թե արի,
քաղաքում սիրուն տղա չի մնացել:

Մենք չենք զգում
ո՛չ սեր, ո՛չ ատելություն
և ամենը, ինչ հյուսված է մեզ հետ
որպես էություն,
չենք հիշում
մեր կերած հացը, մեր խմած ջուրը,
մեր տունն ու հասցեն,
շնչելու օդը.
մեր մերձավորը պատերազմն է,
որ մեր ջղերի մեջ ու մեր բջիջներում է:

Մենք չունենք այլընտրանք,
մեզ տրված չէ երկմտելու հեշտն ու թեթևը
և կասկածը՝ գոնե մեկ վայրկյան,
մենք դատապարտված ենք
մեկմեկու աչքերի մեջ կարդալ,

որպես հազարամյա ճակատագիր.
-Չե՞ք կարող պարտվել,-
որ մեր երթն է և չուն նոր հորիզոններ:

2.Մինոր

Ջինադադար: Ինքնահանձնում:
Խնամք ու դողով
մենք հավաքում ենք մնացորդը
մեր ցավի, արյան և ինչքի,
ու ճամփա ընկնում
հողի գույնը մեր աչքերում,
փակվող դռների ճռինչը մեր ունկերի մեջ
և տեղանունների դառնացող համը մեր լեզվի վրա
ինչպես 30 տարի, 105 տարի և 1050 տարի առաջ էր՝
դրախտ, քավարան, դժոխքի միջով՝
հոգնած ու բեռնավոր, դեպի տուն անհայրենիք:

-Ո՞ւր ենք գնում, տղաս,-
հարցնում է հայրը իրենից ծեր որդուն,
որ երիտասարդ իր օրերն է կողք կողքի
և բոլորովին շարել բեռնատարի թափքում:
-Վառի՛ տունը, ո՞ւմ ենք թողնում:
Որդին նայում է կրակին,
հայրը մոխիրն է տեսնում.
ու տանում է շիրմաքարը հոր
մի ուրիշ որդի:
Հանում է խաչը, զանգերն է իջեցնում
վանահայրը միջնադարի եկեղեցու.
-Տեր, փրկեա զմեզ ի չարէ,-
ու թողնում է սրբավայրը պղծողին:
Գնում է շարասյունը տեղահանների՝
հատված, ցրիվ ու ավեր,

որ տեղ չի հասնում երբեք ժամանակների մեջ:

Խոցում են օդից, երկինքներից ամենաբարձր,
ցամաքից են խփում, հողի հաստ շերտերից,
արգելված զենքեր են, ռումբեր թունավոր,
որ սփռում են աղետի բոլոր ձևերը՝ հումանիտար ու կենսական,
և հողը այրվում է խորքից, ուր չի աճելու ծառ ու թուփ:
Տուն ու շենքեր և ինչ կա բարձր՝ հավասար են հողի հետ,
քաղաքներ, գյուղեր բեկոր են ու խիճ,
սպանված ու տեղահան, բնաջինջ ու ցեղասպան:
Աշխարհը գրում է օրենքներ
թափառող շներին ու կատուներին սատարող,
բայց չի լսում սպանվող երեխայի ճիչը
ու վերջին աղոթքը մորթվող ծերերի.
երկնքում մեր աստվածն է,
երկրի վրա՝ մեր զինվորը:

Դուք վստահեցիք, մենք թերացանք,
դուք հավատացիք, երկմտեցինք մենք,
ձեր իմաստավորը մենք դարձրեցինք անիմաստ
և մնացինք առ ոչինչ:
Մենք մենակ թողեցինք ձեզ բարձր լեռներում՝
ցրտի ու սառնության մեջ,
մոռացանք խրամատների թացի ու արյան վրա՝
զենքը ձեռքներիդ,
թիկունք շրջեցինք,
երբ առաջնագծում նայում էիք ուղիղ թշնամուն:
Մենք մատնեցինք ձեր քաղաքը,
բերդն ու ամրոցը,
երբ դուք պարսպին կանգնած,
բարձր աշտարակում և դարպասի առաջ
հսկում էիք օրերի երթն ու ապրելու իրավունքը մեր:
Մենք բացեցինք ձեր թիկունքը,

երբ դուք մեր կուրծքն էիք փակել
ձեր հասակով,
առասպել հյուսեցինք ձեր շուրջը,
մենք մնացինք մանրածախ ու չնչին.
մեզ ստեցին, ու ստեցինք ձեզ:
Մենք հանձնեցինք ձեր հայրենիքը
և ձեր հայրերի հայրենիքը,
թղթին դրած մեկ նիշով:
Մենք կփնտրենք ձեզ ողջերի մեջ,
դուք մեռածների մեջ կգտնեք մեզ.
բայց դուք կա՛ք,
և նորից ենք լինելու մենք:

Փորե՛ք հողը,
նրանց մարմիններն են՝ ամուր հենարան
ու լույսի արմատներ, մեր ոտքերի տակ,
նայեք երկրին,
նրանց հասակն է ձիգ ու համարձակ,
որ մեր հայացքը ուղղում է բարձր հորիզոններ,
երկինք նայեք,
նրանք են պատգամում՝ նոր աստվածներ,
-Երբե՛ք չխոնարհվեք:

Հայրենիքը չեն պարտվում, քանի դեռ չեն կորցրել
ինքնահաշտությամբ.
պարտվողն է նորից հաղթում, թե չի ընկրկել:

Մեր կոպերի տակ տեսնելու են ձեր աչքերը,
մեր շուրթերից ձեր բառերն են խոսելու,
հորիզոնը՝ դեպի հայտնություն, չափելու ենք ձեր հայացքով,
և հոսելու եք մեր երակներով որպես արյան գույն,
շողելու եք աստղալույս մեր հոգիների մեջ:
Պտտվելու է ժամացույցի սլաքը, որ կանգ է առել,

մեկնարկելով ժամանակը նորից՝ դար ու հազարամյակ,
ձեր անունն է կրելու ծնվող երեխան,
որպես հեքիաթի հրաշամանուկ,
և իր տունն է կառուցելու
ձեր փլված մարմնի դաշտ ու լեռներում,
մեր սկիզբը կլինի այնտեղ,
որտեղ ձեր վերջն էր: